ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<02>> դեկտեմբերի 2025թ. N ՄՌ/2008 - Ա
ք. Արմավիր

## «ԱՂԱՎՆԱՏԱՆ Ղ. ԱԲԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՄԱԼՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Ամալյա Վարդանյանի 2025 թվականի դեկտեմբերի 1-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Ամալյա Վարդանյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ից 18-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ամալյա Վարդանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Կիմա Խաչատրյանին:
3. 2025 թվականի դեկտեմբերի 5-ից 18-ը ներառյալ «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Կիմա

Խաչատրյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Ամալյա Վարդանյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի դեկտեմբերի 19-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ